ՆԱԽԱԳԻԾ 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

<<___>>_____ 2011 թվականի N _____ - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ենթակայության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հետ վերցնել անհատույց օգտագործման իրավունքով նրան ամրացված՝ Երևան քաղաքի Կոմիտաս 49/3 շենքի 1-ին հարկից՝ 227 քառ.մետր, 8-րդ հարկից՝ 430 քառ.մետր և 9-րդ հարկից՝ 430 քառ.մետր տարածքները և հանձնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի և Երևան քաղաքի ութ տարածքային բաժինների գործունեությունը կազմակերպելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի և արդարադատության նախարարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել որոշման 1-ին կետում նշված տարածքի հանձնման - ընդունման աշխատանքների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված սույն որոշման 1-ին կետում նշված տարածքների անհատույց օգտագործման պայմանագիրը:

Հ. Թովմասյան

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ներկայումս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն) իր կողմից Երևան քաղաքում իրավաբանական անձանց պետական գրանցման ծառայությունների մատուցումը մեկ կենտրոնից և «մեկ պատուհանի կանգառ» (ՄՊԿ) սկզբունքով իրականացնելու համար չունի համապատասխան շենք: Այդ առումով Հանրապետության կառավարությունը 2010 թվականի օգոստոսի 19-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին» որոշում, որով Գործակալության կողմից Երևան քաղաքում իրավաբանական անձանց գրանցման ծառայությունների մատուցումը «մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով իրականացնելու համար համապատասխան տարածքի վերանորոգման և կահավորման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հատկացվել է 113262.4 հազ. դրամ: Նշված որոշմանը համաձայն՝ Կոմիտաս 49/3 հասցեում գտնվող «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրացված շենքի 227 քառ.մետր տարածքով 1-ին հարկի, 430 քառ.մետր տարածքով 8-րդ հարկի և 430 քառ.մետր տարածքով 9-րդ հարկի տարածքներում արդեն սկսվել են շինարարական աշխատանքները, պետք է կատարվի կապիտալ վերանորոգում, գազիֆիկացում և այլն, սակայն շինարարական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ չեն կնքում պայմանագրեր, քանի որ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը այդ շինության նկատմամբ որևէ իրավունք չունի:

Կարգավորման բնույթը.

Նախագծով նախատեսվում է Գործակալության կենտրոնական մարմնի և Երևան քաղաքի ութ տարածքային բաժինների գործունեությունը կազմակերպելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությանը հանձնել ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրացված շենքի 1-ին, 8-րդ և 9-րդ հարկերը:

Առաջին հարկում նախատեսվում է ունենալ տեղեկատվության տրամադրման և խորհրդատվության տրամադրման 2-3 պատուհաններ, սրահի ղեկավարի աշխատասենյակ, փաստաթղթերի ընդունման 6-8 պատուհաններ, ինչպես նաև տեղադրել համապատասխան պատուհանին մոտենալու հերթագրման կտրոնի տրամադրման սարք, էլեկտրոնային ցուցատախտակ, «դատալեքս» տեղեկատվական համակարգ, քաղաքացիների սպասելու և փաստաթղթերի լրացման համար անհրաժեշտ աթոռ-սեղաններ: Քաղաքացիների շարժման ուղղությունը կկարգավորվի այն ուղղորդող ժապավենի միջոցով:

Ակնկալվող արդյունք.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է Գործակալություն կողմից իրավաբանական անձանց պետական գրանցման ծառայությունների մատուցումը իրականացնել մեկ կենտրոնից և «մեկ պատուհանի կանգառ» (ՄՊԿ) սկզբունքով, որով կկրճատվեն գրանցման ընթացակարգերը և ժամկետները, ՄՊԿ-ում կընդունվեն օրենքով սահմանված գրանցման վճարներ, կստեղծվի ՄՊԿ-ից առգիծ (օնլայն) ռեժիմով օգտվելու հնարավորություն, կստեղծվի գրանցված կազմակերպությունների էլեկտրոնային տվյալների և տեղեկատվական միասնական համակարգ, գրանցված տվյալները կփոխանցվեն ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը և դրանցով իսկ կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, կստեղծվեն նպաստավոր պայմաններ գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև պետական գրանցման ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան ծառայությունների մատուցման համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում, և այն համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2010 թվականի նոյեմբերի 30-ի թիվ Ե2-4490 գրություն	Հաշվի առնելով, որ Ձեր 22.11.2010թ. թիվ 01/4450-10 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով Երևան քաղաքի Կոմիտաս 49/3 հասցեում գտնվող շենքից «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին հանձնվող տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված են «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն առաջարկում է՝ հիմք ընդունելով	Ընդունվել է:	Նախագիծը լրացվել է նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված սույն որոշման 1-ին կետում նշված տարածքների անհատույց օգտագործման պայմանագիրը:»:

	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 698-րդ հոդվածի 1-ին կետը, Որոշման նախագծում նախատեսել դրույթ՝ «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագիրը «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին հանձնվող տարածքների մասով լուծելու վերաբերյալ:		
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն 2010 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1/4.4-Ե/10236-10 գրություն	Հայտնում ենք, որ Նախագծում անհրաժեշտ է նշել *<<Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն>>* պետական ոչ առևտրային կազմակերպությունից հետ վերցվող և *<<Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ>>* պետական կառավարչական հիմնարկին ամրացվող գույքի արժեքը:	Ընդունելի է	Առաջարկությունն ընդունելի է, սակայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը չի տիրապետում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացվող գույքի արժեքին:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն 2010 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 07/18.1/6357-10 գրություն	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) հենքի վրա ստեղծվել է բիզնես կենտրոն և նշված կենտրոնի հիմնական նպատակներից են ձեռներեցությամբ զբաղվելու համար անհրաժեշտ գործընթացների իրականացմանն աջակցելը, արդիական բիզնես-մեթոդների ներմուծումը և արմատավորումը, մտավոր սեփականության առևտրայնացմանն աջակցությունը, նորագույն տեխնոլոգիաների հետազոտությունների իրականացումն ու դրանց մասին տեղեկատվության մատչելիության ապահովումը: Նշված գործընթացները կրելու են շարունակական բնույթ և Կազմակերպությունը իրականացնելու է իր գործառույթներից բխող բազմաթիվ այլ ծրագրեր, ինչի պարագայում ներկայումս աննպատակահարմար ենք համարում նշված տարածքը ՀՀ արդարադատության նախարարությանը հանձնելուն: Միաժամանակ ելնելով վերոգրյալից և	Չի ընդունվել	Պետության սեփականությունը հանդիսացող տարածքը հատկացված է «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ անհատույց օգտագործման իրավունքով և այդ առումով պետությանը պատկանող տարածքները պետության կողմից վարձակալությամբ վերցնելը գտնում ենք անընդունելի: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծում նշված տարածքները վերանորոգելու համար Հանրապետության կառավարության կողմից 2010 թվականի օգոստոսի 19-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու մասին» որոշում, որով Գործակալության կողմից Երևան քաղաքում իրավաբանական անձանց գրանցման ծառայությունների մատուցումը «մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով իրականացնելու համար համապատասխան տարածքի վերա-նորոգման և կահավորման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության

	ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետով՝ առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի և Երևան քաղաքի ութ տարածքային բաժինների գործունեությունը կազմակերպելու նպատակով Կազմակերպության տարածքը զբաղեցնել վարձակալության հիմունքներով՝ կնքելով վարձակալության պայմանագիր:		պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը հատկացվել է 113262.4 հազ. դրամ: Նշված որոշմանը համաձայն՝ Կոմիտաս 49/3 հասցեում գտնվող «Նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին ամրացված շենքի 227 քառ.մետր տարածքով 1-ին հարկի, 430 քառ.մետր տարածքով 8-րդ հարկի և 430 քառ.մետր տարածքով 9-րդ հարկի տարածքներում արդեն սկսվել են շինարարական աշխատանքներ.